

ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԳԻՐՔ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԶՎԱՆՑՈՒ  
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՎԱՋԻՆ ԶԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայ տպագրության երախտավոր Գրիգոր Մարզվանցու ավելի քան քառասնամյա (1694—1737 թթ.) տպագրական գործունեությունը բազմիցս արժեքավորվել է բանասիրության կողմից<sup>1</sup>։ Այդուհանդերձ, Գրիգոր Մարզվանցու տպագրած ոչ բոլոր գրքերն են հայտնի մատենագիտությանը և, բնականաբար, գրանցից ոչ բոլորն են ըստ ամենայնի ուսումնասիրվել և արժանացել պատշաճ գնահատության։ Այստեղ մեր նպատակն է կոնկրետ տեղեկություններ և բանասիրական պարզաբանումներ տալ նրա տպագրած երկու նորահայտ գրքերի մասին, որոնք պահվում են Երևանի Մաշտոցի անվան մատենադարանի հնատիպ գրքերի բաժնում (№ 2013 ակիզատ 2014-ի հետ)։ Այդ գրքերը այժմ դրված են մեկ ընդհանուր կաղմի մեջ, որը կատարվել է ոչ թե տպագրության ընթացքում, այլ՝ հետագայում։ Մատենագետները տեղեկություն ունեն դրանցից միայն մեկի՝ «Տետրակս որ կոչի պտուղ զբաշանութեան» անունը կրող գրքի մասին, որը մեզանում մինչև այժմ ծանուցվել է կողմնակի աղբյուրների հիման վրա։ Մյուս գիրքը Գրիգոր Տաթևացու մի նշանավոր աշխատության բոլորովին նոր և անավարտ տպագրությունն է, որը ժամանակագրորեն նախորդում է մինչև այս հայտնի երկու տպագրություններին, բայց, ցավոք, մեզ է հասել ոչ ամբողջական վիճակով (ընդամենը 16 էջ)։

Առանձին-առանձին անդրադառնանք այդ գրքերին։

«Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակը (1512—1800)»<sup>2</sup> կաղմողները նշում են «Տետրակս որ կոչի պտուղ զբաշանութեան» վերնագրով 32 էջանոց մի գիրք, որը տպագրված է եղել Կոստանդնուպոլսում, 1733 թ.։ Նրանք երկու աստղանիշով տրվող պայմանական տարբերակմամբ հայտնում են, որ այդ գիրքը «հիշատակվում է մատենագիտական աղբյուրներում, բայց չի գտնվել Երևանի, Թբիլիսիի և Բաքվի գրադարաններում»<sup>3</sup>։ Ուրեմն նրանք այդ գիրքը չեն տեսել, թեև հարկ են համարել տալ հետևյալ հարակից ծանոթագրությունը. «Զարբհանալյանի նկարագրության մեջ անվանաթերթի հայկական թվականը ճիշտ է ՌՃԶԲ (1182+551=1733), իսկ փրկչական թվականը ՌէձԼԳ (1733)»-ի փոխարեն սխալմամբ տպագրված է ՌէձԼԴ։ Ֆ. Մակլերի՝ Ամստերդամի համալսարանի հայերեն գրքերի ցուցակում այդ

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1885, նույնի, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 169—170, Լեոն, Հայկական տպագրություն, Կ. Ք, մաս 1, Թիֆլիս, 1902, էջ 143—150, Թեոֆիլ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 54—55, Գ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 127—131, Հ. Դավթյան, Աշխարհարար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Երևան, 1964, էջ 25—32, Բ. Կորկոտյան, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567—1850), Երևան, 1964, Ռ. Իշխանյան, Հայ գիրքը. 1512—1920 թթ., Երևան, 1981, էջ 74—75։

<sup>2</sup> Տե՛ս «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800)», կաղմեցին՝ Հ. Մ. Դավթյան, Հ. Հ. Սիլվանյան, Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Մ. Ե. Միրզոյան, Ա. Մ. Սափալյան, Երևան, 1963, էջ 102։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ XIX։

սխալը ճշտվում է<sup>4</sup>։ Գարեգին Զարբհանալյանի գրքում, իրոք, «Տետրակս որ կոչի պտուղ զրաջանութեանը» վերաբերող մատենագիտական սեղմ տեղեկության մեջ առկա է այդ «սխալը»։ Դա միմիայն տպագրական-սրբագրական խնդիրն է, որը, ինչպես տեսանք, ճշտվում է հայագետ Ֆրեդերիկ Մակլերի մատենագիտական ընդարձակ, բանասիրական առումով արժեքավոր մի աշխատության տվյալների հիման վրա<sup>5</sup>։

Այսպիսով, մատենագիտական տեղեկությունները հասնում են մինչև Գ. Զարբհանալյանի գիրքը, դրանց հավաստումը՝ մինչև Ֆ. Մակլերի աշխատությունը։ Բայց այստեղ խիստ արժեքավոր են Ֆ. Մակլերի տվյալները, որովհետև մեր կարծիքով նա անձամբ տեսել է «Տետրակս որ կոչի պտուղ զրաջանութեան» գիրքը։ Դա ապացուցվում է հետևյալ փաստերով. նախ, նա տվել է գրքի ընդարձակ և խիստ ստույգ վերնագիրը. «Տետրակս որ կոչի պտուղ զրաջանութեան»։ Շարագրեցեալ ի նրաաստէ ումեմնէ աշխատասիրէ՝ ի խնդրոյ ոմանց իմաստնասէր և ուսումնաջան անձանց՝ ի Թուրքիոյ ՌՃԶԲ. ապիս աբեթեան և ի փրկչական համարողութեան. ՌէձլԳ-ին, արդեամբք և ծախիւք ումեմն անձին բարեպաշտի և ածասիրի և մահտեսույ։ Եղև տպեցեալ ի Կոստանդնուպօլիս մեծահանդէս և կայսերապսակ քաղաքի»։ Երկրորդ, նշել է հավաստի տեղեկություններ գրքի ընդհանուր ծավալի մասին (32 էջ), որը, եթե անտեսենք սկզբից տրվող Բ—Զ էջակալումը, առանց էջանիշի է («32 pages non paginées»)։ Երրորդ, բերել է գրքի վերնագրի համառոտ Բարգմանությունը («Fruit de l'effort inutile(?)... Constantinople, 1733») և, որն այստեղ առավել կարևոր է, արտաքին նկարագրությունը. ըստ վերջինի, գիրքն ունի «այծի կաշվից պատրաստված ամբողջական և ճկուն կազմ» (Ֆրանսերեն՝ «rellure souple en maroquin plein»)։ Եվ, հաշ, այդ կազմն էլ մեզ է հասել գրեթե նույն վիճակով, սակայն արդեն մեկ այլ գրքի մի հատվածի (16 էջ) մեխանիկական ներառումով՝ կապված տպագրական նույն չափսն ունենալու հանգամանքի հետ։ Ավելացնենք, որ այդ հատվածը սկզբից և եթ, իբրև տպագրիչի կողմից արված գործ, նույն կազմի մեջ զետեղված լինելու դեպքում հազիվ թե վրիպեր Ֆ. Մակլերի ուշագրությունից։ Այս ամենով հանդերձ, «Տետրակս որ կոչի պտուղ զրաջանութեան» գրքում կան նաև այլ կարգի կարևոր տեղեկություններ, որոնց Ֆ. Մակլերը չի անդրադարձել։ Դրանք ամփոփված են գրքի շարադրանքի մեջ։ Ինչ վերաբերում է գրքի բովանդակությանը, ապա հայտնի է, որ Ֆ. Մակլերի նպատակից դուրս է եղել ոչ միայն այս, այլև իր կողմից մատենագիտական մշակման առնված մյուս գրքերի բովանդակությանն անդրադառնալը։

«Տետրակս որ կոչի պտուղ զրաջանութեան» գրքի տիտղոսաթերթի արտաքին հանգամանքները վկայում են, որ այն տպագրվել է Գրիգոր Մարգվանեցու տպարանում։ Ուշագրավ է, որ վերնագրում հեղինակի և տպագրության ծախքերը հոգացողի մասին խոսվում է անորոշ. «Շարագրեցեալ ի նրաաստէ ումեմնէ աշխատասիրէ» կամ՝ «արդեամբք և ծախիւք ումեմն անձին բարեպաշտի և աստուածասիրի և մահտեսույ»։ Այստեղ անհամեմատ կարևոր է հեղինակի ով լինելու հարցը, որի լուծումը գտնում ենք գրքի շարադրանքի, ինչպես նաև՝ բովանդակության պարզաբանման օգնությամբ։ Բնականաբար, հարց է առաջանում. ի՞նչ բովանդակություն ունի գիրքը և ինչպիսի՞ շարադրանքով է մատուցվում նյութը։ Այսպես. գրքի վերնագրին, նույն 3-րդ էջում, անմիջապես հաջորդում է «Առական գրքից» առնված երեքտողանոց մի մեջբերում, որից հետո գալիս է հետևյալ հանգավոր քառատողը. «Զչա՛

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 102։

<sup>5</sup> Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, էջ 585—586։

<sup>6</sup> Տե՛ս «Les livres imprimés arméniens de la Bibliothèque de l'Université l'Amsterdam. Notice et description, par Frédéric Macler» («Revue des études arméniennes», t. VI, fascicule 2, Paris, 1926, pp. 71—148), p. 143, № XCIX։



նում է խաշատուր էրզրումցուն և նրա գործերը, իսկ այդ ծախսերը համարում դրամական միջոցների զուր վատնում:

Դրանով չի ավարտվում «Տեսարակս որ կոչի պտուղ դրաջանութեան» գրքի բովանդակությունը: Հանգավոր բանաստեղծութիւնք շարունակվում է այն պարսկականը, որ Գրիգոր Մարզվանեցին ուղղում է իր հակառակորդին՝ այս անգամ շեշտը դնելով խաշատուր էրզրումցու երկերի արժեքի վրա: Այդ երկերը համարում է միտումնավոր գործ և դրանք ամբողջովին մերժում: Բանաստեղծութեան այս մասը կրում է հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Դարձեալ սակս աղգիս խառնակութեան և պատճառ գոլոյն վրդովման, որ ևղեալ հեղինակ և գլուխ շարեաց, սերմանեաց գորոմն իսկ շարութեան, որ ոչ երբէք գտանեն հանգիստ և դադար ոմանք յազգէս մերմէ»:

Հեղինակի նպատակամղման տեսակետից բավական հետաքրքրական է նաև գրքի բուն վերնագրի հետևյալ կոնկրետ, գործնական բացատրությունը. «Պտուղ դրաջանութեան վասն այնր եղի զանուն սորին, զի և գիս բռնադատեալ ի զուր ջան քո, առ ի վրէժխնդրութիւն անյարմար գործոյդ ի զուր աշխատեցուցեր: Ըստ այնմ որ ասէ՝ աշխատեցուցեր վիս ի շարիս քոյ» (էջ 32): Այս բացատրության մեջ, բնականաբար, խոսքը դարձյալ ուղղված է նույն հակառակորդին: «Տեսարակս որ կոչի պտուղ դրաջանութեան» գրքի վերջում տրվում է հետևյալ համառոտագրված նախադասությունը. «Զամ զգիշ»<sup>7</sup>. Ղևկ ի Ե՛ գլ՞. Ե՛ հա՞»:<sup>8</sup> Համառոտագրությունից երևում է, որ հեղինակը իր խոսքն ավարտում է «Ավետարան ըստ Դուկասու» գրքի կոնկրետ գլխից և որոշակի հատվածից առնված խիստ բնութագրական հետևյալ նախադասությամբ. «Զամենայն գիշերս աշխատ եղեալք եւ ոչինչ կալաք. բայց վասն քո բանիդ արկցուք զգործիսս (գլուխ Ե, հատուած Ե)»: Վերջաբանի կարգով տրվող այս նախադասությունը նույնպես միանգամայն համահունչ է հեղինակի ընդհանուր քննադատական խոսքին:

Բերված փաստերը հաստատում են, որ «Տեսարակս որ կոչի պտուղ դրաջանութեան» գիրքը կաթոլիկական դավանաբանական պայքարի շուրջ ժամանակին ծավալված բուռն վեճերի արդյունք է: Այդ գրքով հայտնի է դառնում, որ Գրիգոր Մարզվանեցին նաև ինքնուրույն երկի հեղինակ է: Նա ոչ միայն հետևողականորեն առաջ է տանում իր ձեռնարկած տպագրական գործը, այլև մասնակցում է ժամանակի հասարակական հրատապ խնդիրների շուրջ տարվող վեճերին, հանդես գալով վիճահարույց կողմի ներկայացուցիչներից մեկի քննադատությունները նվիրված ինքնուրույն ստեղծագործությամբ: Վերջինս, ինչպես նշվում է նաև գրքի ընդարձակ վերնագրում, նա գրել է ուրիշների դրդմամբ՝ «Ի խնգրոյ ոմանց իմաստնասէր և ուսումնաջան անձանց»: Գիրքը շարադրված է ժամանակի գրաբար հայերենով, որը պարունակում է որոշակի առանձնահատկություններ: Այսպիսով, «Տեսարակս որ կոչի պտուղ դրաջանութեան» գրքի արտաքին հանգամանքները և բովանդակությունը վկայում են, որ նրա հեղինակը Գրիգոր Մարզվանեցին է և այն տպագրված է վերջինիս տպարանում, Կոստանդնուպոլսում:

Երկրորդ գիրքը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» (գրված 1379 թ.) բարձրարժեք աշխատության նորահայտ տպագրություն է: Ըստ մինչև այժմ հայտնի բանասիրական ու մատենագիտական տեղեկությունների՝ «Գիրք հարցմանցը» ունեցել է երկու տպագրություն: Առաջինը ձեռնարկվել է 1720 թ., Կոստանդնուպոլսում, Գրիգոր Մարզվանեցու տպարանում և ըստ էության անավարտ է: Դա բանասեր-մատենագետները բացատրում են պոլսահայ շրջանում ժամանակին ծայր առած հասարակական-քաղաքական ոչ բարվոք պայմանների և կաշկանդող հանգամանքների առկայությամբ: Այս տպագրության խափանումը բանասեր Բաբղեն վարդապետ Կյուլեսերյանը բացատրում է ձեռնարկողի՝ էջմիածնի նվիրակ Պետրոս Աստապատցու մահով (1729 թ.)<sup>7</sup>:

<sup>7</sup> Տե՛ս Բ. Վ. Կյուլեսերյան, Իսլամը հայ մատենագրության մեջ, Վիեննա, 1930, էջ 51:

Բացի դրանից, ինչպես նշում է նաև Բ. Վ. Կյուլենսերյանը, գրքի երկրորդ՝ 1729 թ. տպագրությունը, որտեղ բացակայում էր «Ընդդէմ այլազգեաց» (կամ՝ «Ընդդէմ տաճկաց») վերնագրով հատվածը, իրականացվել է նկատի ունենալով նաև վերոհիշյալ հանգամանքները<sup>8</sup>։ Հասարակական-քաղաքական աննպաստ պայմաններին որոշակի տեղ է տրվում նաև Ռ. Իշխանյանի՝ «Գիրք հարցմանցի» 1720 թ. տպագրությանը նվիրված հոդվածում, ըստ որի «Գիրք հարցմանցի» առաջին տպագրությունը «անավարտ է մնացել նույնպես գրաքննության պահանջով»<sup>9</sup>, իսկ Կյուլենսերյանի կողմից Պետրոս Աստապատցու ձեռնարկած տպագրության ընդհատումը վերջինիս մահով պատճառաբանելը դիտվում է անհավանական։ Հոդվածում տրվում է հետևյալ հիմնավորումը. «Գրքի տպագրության անավարտ մնալու պատճառը պետք է որոնել նրա մեջ իսլամին վերաբերող «Ընդդէմ այլազգեաց» գլխի առկայության հանգամանքում։ Պոլսի իշխանությունները, տեղեկանալով այդ գլխի բովանդակությունը և ոչնչացնելով նրա տպված թերթերը, չէին կարող կասկածի չենթարկել ողջ դիրքը և շարժել նրա տպագրությունն ընդհանրապես»<sup>10</sup>։

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» երկրորդ և (եթե մի պահ անտեսելու լինենք դարձյալ «Ընդդէմ այլազգեաց» գլխի բացակայությունը) ամբողջական տպագրությունը, ինչպես ասվեց, սկսվում է 1729 թ., Կոստանդնուպոլսում։ Տպագրիչն է Աստվածատուր դպիրը, որը, ինչպես հայտնի է, մի ժամանակ գործակցում էր Գրիգոր Մարզվանցուն՝ վերջինիս հիմնած տպարանի աշխատանքներում։ 808 էջանոց այդ գիրքը աչքի է ընկնում տպագրական որոշակի արժանիքներով։ Գրքի վերջում զետեղված է մի «Հիշատակարան», որի սվյալներով բանասեր-մատենագետները իրազեկ են դառնում նույն աշխատության առաջին տպագրության գոյությունը, և բացահայտվում են «Գիրք հարցմանցի» առաջին և երկրորդ տպագրությունների հանգամանքներն ու տարբերությունները։ Ուրեմն, մինչև այժմ հայտնի էր Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» երկու տպագրություն. մեկը՝ Գրիգոր Մարզվանցու ձեռքով, 1720 թ., Կոստանդնուպոլսում, անավարտ, մյուսը՝ Աստվածատուր դպրի կողմից, 1729 թ., դարձյալ Կոստանդնուպոլսում, համեմատաբար ամբողջական։

Այժմ հայտնի է դառնում, որ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» աշխատությունը ունեցել է մեկ այլ՝ երրորդ տպագրություն, որը ժամանակով նախորդում է մյուսներին, այսինքն՝ արդեն հայտնի երեք տպագրություններից առաջինն է։ Այս տպագրությունից առաջմ հայտնի է ընդամենը 16 էջանոց մի հատված, որը, բարեբախտաբար, ունի մի առանձին վերնագիր, ուր նշվում է հեղինակի անունը. «Գրիգորի Սուամեծի և քաջ հոռտորի՝ բան ընդդէմ մարդադաւան նեհատրականացն»։ Այս վերնագիրը զետեղված է մի զարդանկարի տակ, որն առկա է Գրիգոր Մարզվանցու տպագրած զգալի թվով գրքերում։ Դժվար չէ պարզել, որ մինչև հիմա անհայտ մնացած սույն հատվածը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» աշխատության 7-րդ գլուխն է։ 1729 թ. տպագրության մեջ այդ գլխի վերնագիրը փոքր-ինչ այլ կերպ է տրվում՝ կապված գրքի ընդհանուր ցանկի մեջ մտնող գլուխների հերթականության հաշվառման հետ. «Գլուխ է ի մեծ ցանկէ։ Ընդդէմ մարդադաւան նեհատրականացն։ Որք զբանն բնակութեամբ ասեն ի մարմնի իբր ի տաճարի։ Ի պարապմանց գրոցն ընդդիմադրութիւն։ Պրակ Ա»։

Այստեղ, բնականաբար, ծագում են հետևյալ հարցերը. տպագրական ինչ տարբերություն կա «Ընդդէմ նեհատրականացն» վերնագրով նորահայտ

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 12։

<sup>9</sup> Ռ. Իշխանյան, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի առաջին հրատարակությունը («Էջմիածին», 1963, Թ-Ժ, էջ 51—55)։

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 54։

սուլն հատվածի և «Գիրք հարցմանցի» մինչ այս հայտնի տպագրությունների հատվածների միջև. արդյո՞ք մեր այս մեկ մամուլանոց հատվածը մյուս երկու տպագրություններից պատահականորեն դուրս մնացած նյութերից չէ։ Այս հարցերի պատասխանները գտնելու համար «Ընդդէմ նեստորականացն» հատվածը համեմատել ենք «Գիրք հարցմանցի» երկու տպագրությունների նույն հատվածների հետ և նկատել ենք ակնհայտ տարբերություններ։ Այսպես. «Գիրք հարցմանցի» 1720 և 1729 թվականների հրատարակությունների նյութը մատուցվում է ընդհանրապես երկսյուն շարվածքով։ 1720 թ. տպագրությունն ունի շարվածքի մեծ մակերես (13,3×19,4 սմ), քան նորահայտ հատվածինը, իսկ 1729 թ. տպագրությունը դրանց համեմատությամբ՝ ավելի մեծ մակերես։ «Ընդդէմ նեստորականացն» վերնագրով հատվածի տառատեսակը տարբեր է մյուս երկու հայտնի տպագրությունների տառատեսակներից։ Այն ունի նույն տառատեսակները, ինչ որ «Տետրակս որ Կոչի պտուղ զրաջանութեան» գրքին է։ Ի դեպ, թեյակս չի բացառվում, որ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի», «Ընդդէմ նեստորականացն» վերնագրով հատվածը հրատարակչի կողմից նախատեսված լիներ կազմելու «Տետրակս որ կոչի պտուղ զրաջանութեան» գրքի հետ, մանավանդ որ դրանք բովանդակությամբ ինչ-որ տեղ ախմբան էլ հեռու չեն իրարից և կարող էին ծառայել միևնույն նպատակին։

Այսպիսով, միևնույն նյութը պարունակող երեք հատվածների արտաքին համեմատությունից բխող միակ հետևությունն այն է, որ «Ընդդէմ նեստորականացն» վերնագրով այս 16 էջանոց հատվածը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» մի երրորդ տպագրության նմուշ է. այն կամ ամբողջական տպագրության մի պատահիկ է, կամ ինչ-ինչ հանգամանքների բերումով անավարտ, խափանված տպագրության վկայություն։ Ամենահավանականը երկրորդն է. գրքի այս տպագրությունը թերևս նույնպես դադարեցված է գրաքննչական մարմինների կողմից։ «Ընդդէմ նեստորականացնի» այս հատվածը բովանդակության առումով ևս տարբերվում է մյուս երկու տպագրություններից։ «Գիրք հարցմանցի» 1729 թ. տպագրության նույն հատվածը (էջ 66—70), խմբագրական-սրբագրական աշխատանքի տեսակետից ավելի կատարյալ է, քան «Ընդդէմ նեստորականացն» վերնագրով այս հատվածը։ Նյութի հեղինակային շարադրանքը թեև նույնն է, սակայն բոլոր դեպքերում չէ, որ կարող է խոսք լինել շարվածքի նույնականության մասին։ Դրանում համոզվելու նպատակով հարկ ենք համարում բերել միայն մի զուգահեռ հատված. մեկը՝ «Գիրք հարցմանցի» 1729 թ. տպագրությունից (էջ 69), մյուսը՝ «Ընդդէմ նեստորականացն»-ից (էջ ԺԵ—ԺԶ), ընդ որում ընդգծում ենք տարբերություն հանդես բերող բառերն ու բառակապակցությունները.

«Իննրդ՝ ոպ առաքեաց զիս կենդանին հայր, և ես կենդանի եմ վս հօր, և որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վս իմ։ Հաւցանեմ զբաժանօղս յերկուս. զո՞ր բնութի կերակրիս որով կենդանանասդ. Զի եթէ զայն ըստ ինքնեմ, ահա և անուտելի է բանին բնութիւն։ Իսկ թէ առանձնապ զմարդոյն, զի՞ արդ իցէ կենդանարար մարմինն մարդոյ. կամ որպէ՛ս առաքեցաւ նա ի հօրէ։ Զիա՞րդ իցէ և կենդանի վս հօրս։

«Իննրդ. որպէս առաքեաց զիս կենդանին հայր. և ես կենդանի եմ վս հօր. և որ ուտէն զիս և նա կեցցէ վս իմ։ Հաւցանելի է ցբաժանօղս՝ յերկուց զո՞ր բնութի կերակրիս. որով կենդանանասդ. զի թէ ըստ ինքնեմ զայն, ահա և անուտելի է բանին բնութի իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զի արդ իցէ կենդանարար մարմին մարդոյ. կամ որպէս առաքեցաւ նա ի հօրէ։ Զիարդ իցէ և կենդանի վս հօրս։

Ակնհայտ է, որ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի», «Ընդդէմ նեստորականացն» վերնագրով սույն հատվածը մեկ այլ տպագրության մաս է: Իսկ ե՞րբ է ձեռնարկվել այդ տպագրությունը: Հարցին պատասխանելու համար պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները. նախ, տպագրական մեկ մամուլանոց այդ հատվածի երրորդ էջից է, որ սկսվում է Գրիգոր Տաթևացու երկի 7-րդ գլխի բուն նյութի շարվածքը: Դրան, բնականաբար, պիտի նախորդեն առնվազն ևս երկու էջ, որպեսզի ամբողջանար մեղ հասած մեկ մամուլանոց հատվածը: Եվ իրոք, հիշյալ ընդարձակ վերնագիրը պարունակող երրորդ էջից առաջ կա ևս մեկ թերթ, որի երկրորդ էջում մի ամբողջական նկար է, իսկ առաջին էջում տրված է հետևյալ գրությունը մի վերնագիր՝ «Նկատումն ճշմարտութեան՝ Տպագրեցաւ թվին հայոց. ՌՃԿԲ [=1162+551=1713 թ.]. Ի Հայրապետութեան Տեառն Աղէքսանդրի»: Պարզվում է, որ «Նկատումն ճշմարտութեան» վերնագիրը Գրիգոր Տաթևացու աշխատության մեկ գլխի՝ «Ընդդէմ նեստորականացնի» ընդհանուր անվանումն է, որն ավելի ընդարձակ բերվում է նաև նյութի բուն շարադրանքի սկզբում:

Այսպիսով, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» ունեցել է ևս մեկ տպագրություն, որը ձեռնարկվել է 1713 թ. Աղեքսանդր կաթողիկոսի հայրապետության օրոք և նախորդում է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» մինչ այժմ հայտնի երկու տպագրություններին:

Պակաս կարևոր չեն նաև այն հարցերը, թե հիշյալ աշխատության մեկ մամուլանոց այդ հատվածը որտեղ է տպագրվել և ով է նրա տպագրիչը: Տպագրված հատվածի տառատեսակները, շարվածքի սրբագրման եղանակը, ինչպես նաև ընդհանուր ու կոնկրետ վերնագրերի դեպքում օգտագործված զարդանկարները, լուսանցազարդերը վկայում են, որ այն տպագրվել է Կոստանդնուպոլսում, Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Կոնկրետ դեպքում կարելի է դրանց հետ համեմատել Մարզվանեցու տպարանից դուրս եկած, հայտնի այլ գրքերի տիտղոսաթերթերը: «Նկատումն ճշմարտութեան» վերնագրով գրքի տիտղոսաթերթի զարդանկարը նույնն է, ինչ, օրինակ, Գրիգոր Մարզվանեցու տպարանում լույս տեսած մեկ ուրիշ գրքի տիտղոսաթերթին<sup>11</sup>, Դրանից բացի, «Նկատումն ճշմարտութեանի» տիտղոսաթերթի հակառակ երեսը զբաղեցնող թեմատիկ նկարը նույնպես բնորոշ պիտի համարել Գրիգոր Մարզվանեցու տպարանից լույս տեսած գրքերին:

Վերջում հարկ ենք համարում համառոտակի անդրադառնալ այդ երկու անուն-դրքի ընդհանուր նկարագրությանը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, դրանք զետեղված են մեկ ընդհանուր կազմի մեջ՝ հետագա միջամտությամբ: Այդ մեկ ամբողջական գիրքը, հավանաբար, վերակազմվել է Կոստանդնուպոլսում, որովհետև այն մինչև 1848 թ. եղել է Կոստանդնուպոլսի Միջազյուղի գրադարաններից մեկում. դա է ցույց տալիս դրքի առաջին էջին դրված կնիքը: Բացի դրանից, վերակազմելիս օգտագործվել է «Տեստրակս որ կոչի պտուղ զրաջանութեան» գրքի՝ Ֆ. Մակլերի կողմից նկարագրված «այծի կաշվից պատրաստված ամբողջական և ճկուն կաղմը»: Կազմը տպագրված էջերից բաժանված է սկզբից և վերջից չորսական մաքուր և սպիտակ թերթերով, որոնք ըստ երևույթին դրված են վերակազմողի կողմից: Դրքը վերակազմվել է հետևյալ հաջորդականությամբ. նախ դրված է «Նկատումն ճշմարտութեան» վերնագրով տիտղոսաթերթը, «Ընդդէմ նեստորականացն» անավարտ գլուխահատվածը, այնուհետև՝ «Տեստրակս որ կոչի պտուղ զրաջանութեան» բանաստեղծությունը՝ ամբողջական ու անթերի: Հետևաբար «Տեստրակս որ կոչի պտուղ զրաջանութեան» գրքի մատենագիտական նկարագրությունը Ֆ. Մակլերը կատարել է մեկ այլ օրինակի հիման վրա, հակառակ դեպքում նա չէր

<sup>11</sup> «Գիրք պատմութեան երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոք», Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարզվանեցի, 1719, էջ 268:

Վրիպի Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» այս նոր տպագրության մատենագիտական նկարագրությունը:

## ДВЕ НОВОВЫЯВЛЕННЫЕ КНИГИ, НАПЕЧАТАННЫЕ ГРИГОРОМ МАРЗВАНЕЦИ

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

### Резюме

В первой половине XVIII в. Григором Марзванеци были напечатаны еще две книги. Первая из них—«Տեսութիւն որ կուի անուշ զբաշխութեան» («Книга, называемая плод напрасных усилий»), автором которой является сам Григор Марзванеци,—напечатана в его же типографии в 1733 г. в Константинополе. Вторая книга—отрывок (16 страниц) издания сочинения «Գիրք հարցմանց» («Книга вопрошений») Григора Татеваци, вышедшего в свет в типографии Григора Марзванеци в 1713 г. Хронологически оно предшествует двум до сих пор известным константинопольским изданиям—1720 и 1729 годов.